

այժմ, ուրեմն չկարէին առանց ջրանցից և առուաց մշակել զերկիր, իսկ ի հաստատել և ի զլուխ տանել զայտափ բազմաթիւ ջրանց և առուօ, պահանջէին ընդ երկար համբերութիւն, և մեծազօր իշխանութիւն *).

(Յ-Տ-Հ-Ն-Լ-Հ)

ԱՐԻՍՏԱԿԵՑ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵԴՐԱԿԵԱՆ.

ԲԱՆԱԿՄԱԿԱՆ

ՍԿՂԲՆ ԸՆԿԵՆ ԲԵՑՇԵՑՐՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՑՔՆԵՐԻ

(Յ-Տ-Հ-Ն-Լ-Հ-Ա-Հ)

Ի

ԶԴԱՆ-ԼԻ-Ն.

Անկէ խցանից երկու գնտակ շինենք և ձգենք ջրով լեբը ամանի մեջ: Խոցաշարժելու ժամանակ մենք երկու երեսյթ կը տեսնենք: Առաջին երեսյթը կը լինի հետեւալու: Երրորդ որ սկսենք գնտակներից մեկը շարժել, միւս գնտակէն մօտիկ տեղից, մենք կը տեսնենք որ այս վերջին գընտակը, կսկսի լողալ առաջինի ետեից: Իսկ եթէ երկոքին գնտակները մօտեցնենք միմեանց և իսկոյն յետ քաշենք ձեռքներս, նոքա իսկոյն կը միանան միմեանց հետ և կսկսեն միասին լողալ: Երկրորդ երեսյթը այն է, որ գնտակները փոքր առ փոքր կսկսեն մօտկանալ ամանի կողքերքին:

(*) Եղիշ, որ ձևագործողեաց ի հայաստան թուրքիայ, ետեւ մեծ յրաց յինեւ համակ ի վիմարք քարտնց, ուստի լուր ոծէին ի մաս քաղաք: Եղանգերական առանցքութիւնն ըստիրամայ այս կայն:

Եթէ ջրով լեբը բաժակի մեջ ձգենք մի կտոր շաքար, ջրի երեսին կերելին օդի պղպջակներ: Եյդ պղպջակները կը ձգտին միանալ միմեանց հետ: Եւ նոքա բոլորիքեան կսկսին շարժիլ դէպի բաժակի որմունքը, և երբ որ փոքր ինչ մօտենան, այն աւեղից աւելի արագութեամբ կը կըպչին բաժակի որմերին:

Եյս երկու օրինակից մենք տեսնում ենք, որ մի քարշող զօրութիւն կայ և նաէ, որ հարկագրում է գնտակներին և բըշաբիներին մօտենալ միմեանց: Եյդ զօրութիւնը անուանվում է ՅԵՊՈՂ-ԼԻ-Ն:

Հապա ինչը համար երկրի երեսին չենք տեսնում այսպիսի ձգողութիւն, ինչպէս վերելք բերուած փորձերի մեջ տեսնում ենք: Դորա պատճառն այն է, որ երկրի մակերեսյթի անհարթութիւնը արգելում է մարտիներին միմեանցից մօտենալու: Եյս մի և նոյն պատճառն է նոյնպէս արգելք լինում ձգողութեանը, եթէ մարմինները գանվում են սեղանի կամ գորա նման մի այլ բանի վերայ,

Որքան որ մարմինը մեծ լինի, նա այնքան աւելի ձգողութիւն կունենայ: Եյդ հատկանալի է: Երկու հաւասարաշափ սնկէ գնտակները հաւասարաշափ ձգողութիւն են ցոյց տալիս դէպի միմեանց: Բայց եթէ մէկը միւսից մեծ է, բնականաբար այդ մեծը աւելի շուտ կը քարշէ փոքրին դէպի ինքը, պատճառ նորա մեջ շատ մասներ կան, որոնցից ամեն մէկը երկշնուր է ձըգողութիւն: Եյսպէս, օրինակ, երբ որ քարը շաղուում ենք դէպի ի վեր, նա ինչը է վայր ընկնում երկրի վերայ: Փայտը, թուղթը և բմբուլը նոյնպէս վայր են ընկնում, եթէ մի այլ բան չի բանում նը-

բանց։ Խնչու համար դոքա գէպի ի վերջն
թռչում, այլ անպատճառ գէպի ի ցած են
զալիս և ընկնում երկրի վերայ։

Երկրագունող չափազանց մեծ է, ամենամեծ շինութիւնները երկրի հետ համեմատելով աւելի փոքր են նորանից, քանի թէ ամենափոքրիկ աւազնեկը այդ շինութիւններից։ Այս իսկ պատճառով՝ երկիրը ցոյց է տալիս ահազին ձգողութիւն։ Եթէ երկիրը չը քարշէր չը ձգէր դէպի ինքը բոլոր մարմինները, մեր վերև շպըռտած բաները կերթային անդարձ, և կանգ կառնէին միայն այն ժամանակ, երբ որ մի այլ բան կարգելէր նոցաշարժողութիւնը թափէտ և երկիրը գունաբի ձեւ ունի, բայց չափազանց մեծ ձգողութիւն ունենալով, իւր վերայ եղած բոլոր մարմինները պահում է իւր վերայ և նոքա չեն ընկնում միջնողորդի մէջ։ Առաստաղի վերայ ժողովում է շատ թող, այս ինքնն այլ և այլ բաների փշունքներ, փոշիներ։ Այդ թողը նստում է առաստաղի վերայ և մընում այն տեղ նորանից կցուած, պահանձառ առաստաղը համեմատելով այդ փոշիների հետ, խիստ մեծ մարմին է, ուրեմն իւր ձգողութիւնն էլ մեծ է և այդ պահանձառ առաստաղը համեմատելով այդ փոշիների փշունքները, որոնք օդի մէջ պարտվում են իւր մօտերքումը։ Բայց եթէ առաստաղի մի որ և իցէ տեղումը իրատ շատ թող կը նստի, նա կսկսի աւելի ծանրանալ, այդ միջոցին առաստաղի ձգողական գօրութիւնը չե կարող յաղթել նրան, ուստի և այդ փոշիների զանգուածը վայր կընկնի յատակի վերայ։

Զգողութիւնը մենք կարող ենք նկատել և չետեսալ ենոթների մէջ, Ո՞ր

մեանցից մօտիկ եղած անդկի երկու կա-
թիները միաւորելով մի կաթիլ են կազ-
մում։ **Օ**սասի տերեւները թափուելով
լժակի վերայ, ժողովվում են նորա ափումը։

Պենք տեսանք, որ պինդ մարմինների
մասունքները պահպանվում են քայլայ-
վելուց իրանց մէջ եղած կցման զօրու-
թեամբը: Աւրեմն կցումն ևս ձգողութիւն
է: Վիայն այդ ձգողութիւնը գտնվում է
մի և նոյն մարմինի անհատների մէջ, որոնք
միմեանցից անչափի փոքր տարածութեամբ
են չեռացած: Վարմինի անհատների շատ
կամ սակաւ ձգողութիւնից կախումն ու-
նի նորա պնդութիւնը:

թաէ որ մետաղների մէջ աւելի շատ կը-
ցում կայ, ուրեմն և աւելի պնդութիւն,
այդ իմանալու համար հետեւեալ կերպով
են փորձ անում։ Օւանազան մետաղներից
բայց միահաւատար երկայնութեան և հաս-
տութեան ճիպուիիկներ են պատրաստում,
դոցա ծայրերից մելք ամրացնում են, օ-
րինակի համար՝ առաստաղի վերայ, այն-
պէս որ՝ վարի ծայրը ուղիղ յատակին նա-
յէ, այս ինքն ուղղահայեաց լինի, Այս
կերպ ամրացնելուց յետոյ, վարի ծայրից
կախ են տալիս աւելի և աւելի ծանրու-
թիւն (օրինակ ասենք կըսաքար)՝ մինչեւ
որ ծիստը չը կարողանայ տանել այդ
ծանրութիւնը և կտրուի։ Առանով ահա
կարողացել են իմանալ, թէ որ մետաղը
ինչքան ամրութիւն ունի, և գտել են,
որ պողովատի ծիստը պինտ է երկաթի
ծիստից, երկաթինը՝ պղնձից, պղնձինը՝

արծաթից, արծաթինը՝ ոսկուց, ոսկունը՝ կապարից: Եթէ այս փորձը և տեսակ տեսակ փայտերի վերայ անհնք, կարող ենք խմանալ, թէ որը որից աւելի դիմաց կուն է: Պարաններից նոքա են աւելի պինդ, որոնց թելերը աւելի բարակ են, և որոնք աւելի քիչ են ոլորուած, պատճառ, որքան շատ են ոլորվում, այնքան շատ են ձգում, և այնքան թելերի մէջ եղած կցումը պակասում է: Գործուած պարանները աւելի պինդ են լինում, քան թէ ոլորածները: Խռոչած և ձիթած պարանները չորերից թոյլ են, սպիտակացրածները թոյլ են չը սպիտակացրածներից:

Մարմինի պնդութիւնը կարելի է սաստկացնել զանազան հնաբներով: Երծաթից և ոսկուց շնուած բաներին աւելի պնդութիւն տալու համար նոցա մէջ պըղինձ են խառնում: Զիւթ քսուած պարանները աւելի պինտ են լինում քան թէ չը քսուածները: Դերձանին, կար անելու ժամանակ, մեղրամում են քսում:

Երբ որ մի կաոր փայտը կոտրում ենք, և յետոյ կոտրուած ծոյրերը միմեանց վերայ ենք դնում, ինչպէս առաջ եղել էր, այդ ծայրերը չեն կպչում մէկ մէկուց, առաջուան պէս չեն միաւորվում: Իսյց եթէ այդ կոտրուած ծոյրերին հեղուկ մարմին թափենք և յետոյ ծայր ծայրի դնենք, նոքա կստանան իրանց առաջուան դրութիւնը, այս ինքն կը միաւորուին, կամ բողջանան, պատճառ՝ հեղուկը կը լցուի նոցա ծակտիքների մէջ և այդպէսով կը շատացնէ նոցա մէջ կցումը: Եթէ երկու թերթ թուղթ ջրով թրջենք, նոքա աւելի պինդ կը կպչին միմեանցից, քան եթէ

իւղ կամ ձեթ քսենք: Իսյց երբ որ հեղուկը ընդունակութիւն ունի մի առ ժամանակից յետոյ չորանալու, պնդանալու, դորանով աւելի ևս կը շատացնէ կցումն մասունքների մէջ: Եհա արս օրէնքի վերայ է հիմնուած նամակների զմուռով կնքելը, սոսնձի գործածութիւնը, մետաղների զօդելը (*լշեմելը*):

Ա երցնենք երկու պինդ մարմին, մէկը քար և միւսը դեռ լաւ չը չորացրած կաւէ գնտակ: Կաւէ գնտակը կարելի է ճընշել մատներով: Գնտակը կը տափականայ, պատճառ՝ կաւի մասունքների մէջ եղած կցումը շատ թոյլ է: Դորա համար մենք ասում ենք կաւէ գնտակը կախուղէ: Իսյց որքան կամիս սխմի՛ր մատներովդ քարին, նրան չես կարող ճնշել, տափակացնել, նա միշտ կը մնայ այնպէս, ինչպէս որ կայ. դորա համար մենք կասենք քարը կաշծր է, ավելի է: Վաաջին դիմուածումը մասունքների կցումը թոյլ է, իսկ երկուորդումը շատ սաստիկ է:

Ա երցնենք մի փայտէ գաւազան: Դառրան կարող ենք թեքել դէպի ամեն կողմէ Երբ որ դափարացնենք թեքելը, նա դարձեալ կը շտկուի, վերատին կընդունի իւրառաջուան ուղիղ դրութիւնը: Եհաւասիկ ուղին, սորան կարող ես ձգել ինչպէս կամիս, նա դարձեալ կընդունէ իւրառաջուան դրութիւնը: Եյս տեսակ մարմինները, որոնք ձգուելուց, թեքուելուց, սխմուելուց, ճնշուելուց յետոյ ձգտում են դարձեալ իրանց առաջուան դրութիւնըն ստանալ, աօվում են առաջդահան հարմաներ:

Ա այր ձգինք գետնին մէկ ուղինի գընտակ, նա վեր կցատկի իսկոյն: Գնտակը

գետնին զարկուելիս կը ճնշուի իւր զարկուած տեղիցը։ Իսյց առաձգական լինելով նա պիտի աշխատի ստանալ իւր առաջուան դրութիւնը։ Եյդ միջոցին ռեգինի անհաները յետ կը հրուին գետնիցը, և գնտակը վեր կը ցատկի։ Գնտակը որքան ուժով զարկենք գետնին, այնքան նա կաշխատի շուտով ընդունելու իւր առաջուան գնտաձեւ դրութիւնը և այնքան աւելի կը ցատկի դեպի ի վեր։ Ոորա հակառակ, թաց կաւից շինած գնտակը, եթէ զարկենք գետնին, նա կը տափակի իսկոյն, բայց վեր չի ցատկի։ Եյս տեղ մասունքների իրարու հետ ունեցած կցումը չափազանց թոյլէ, այնպէս որ կաւը ինչ դրութիւն կամիս կընդունի, և նորա մասունքները չեն ձգտիլ վերստին ընդունելու իրանց առաջուան դրութիւնը։

Եթէ առաձգական մարմինները երկարժամանակ են մնում թեքուած դրութեան մէջ, նոքա բոլորովին ընդունում են այն դրութիւնը, որ բանութեամբ տալիս են նորանց։ Եյսպէս երկար ժամանակ ձգուած պարանները և ճոպանները պահպանում են իրանց զօռով տրուած երկայնութիւնը։ Եթէ փայտը երկար ժամանակ թեքած պահում են, նա վերջապէս ընդունում է խոտոր ձեւ։ Եյս դիսուածում մասունքները յաճախակի թեքուելուց, այնպէս հեռանում են միմեանցից, որ նոցա մէջ եղած կցումը թուլանում է և նոքա այլ ևս չեն կարողանում ընդունել իրանց առաջուան դրութիւնը։

Ճիպոտը կը կոտրուի, եթէ սաստիկ թեքիս, պատճառ՝ այդ ժամանակ թեքուելու ուժը աւելի կը լինի, քան թէ մա-

սունքների մէջ եղած կցման ուժը։ Թեքուած տեղի մասունքները այնքան կը հեռանան միմեանցից, որ կցումն էլ չի կարող նոցա պահպաննել իրանց առաջուան դրութեան մէջ։

Մարմինների առաձգականութիւնը շատ հարկաւոր է մարդոց համար։ Մարդոց հագուստները պէտք է առաձգական լինին, եթէ ոչ՝ նա չի կարող շարժել ոչ ձեռքը, ոչ ոտքը, միով բանիւ չի կարող շարժիլ ինքը։ Կոտրուող մարմինը մի տեղից միւս տեղ տանելիս, նորան փաթաթում են, բամբակով, ծղնոտով, յարդով, խոտով, թղթով, կամ այլ այս պիսի բաններով, որ չը կոտրուին ճանապարհին, երբ որ սայլը քարքարուտ տեղերով գնալիս լիլխացնում է իւր մէջ եղած բանները։ Պարանների առաձգականութիւնիցն ունի կախումն և լարախաղների ճարպիկ ութեթե ոսահւնները։

ԻԲ.

Աղլ-նո-նի-ն, Մաղլիանո-նի-ն.

Վմենին ծանօթ է կշռորդը, որով կը ռում են զանազան բաններ։ Կշռորդի նըժարների մէկի տակիցը հորիզոնական դիրքով լաւ կոկուած ապակեայ թերթ կապինք, յայտնի բան է նժարը կսկսի ցածրանալ։ Միւս նժարի մէջ այնքան կշռաքար գնենք, որ երկոքին նժարները հաւասարակշիռ լինին միմեանց։ Հիմայ ջըով լիքը մէկ պնակ դնենք և կշռորդը ցածրալնենք այնպէս, որ ապակեայ թերթը ընկնի ուղեղ ջօի երեսի վերայ։ Կշռորդը կամաց կամաց վեր բարձրացնենք, մենք

ἴρ νκασικέնք, ορ αιψαկին կը կպչե ջրիցը
և միւս նժարը կը բարձրանայ:

Այս տեղ մենք տեսնում ենք οր ա-
պակեայ թերթը բռնվում է ջրից: Ուրեմն
մենք այստեղ էլ հանդիպում ենք ձգո-
գութեան: Աեղուկների այսպիսի ձգողու-
թիւնը դէպ ի հաստատուն մարմինները
ասվում է կոչ-նո-նի-ն: Ակսենք կշռա-
քարեր դնել նժարի մէջ, οրպէս զի եր-
կարին նժարները հաւասարակշռա լինին
միմեանց, մենք կը տեսնենք, οր մի քանի
կշռաքար պէտք է դնել նժարի մէջ, οր ա-
պա թէ ապակեայ թերթը պոկուի ջրիցը:
Եթէ մատներս ջրի մէջ մացնենք և
յետոյ հանենք, կը տեսնենք οր ջուրը կը-
պել է մատիցը, և այդ պատճառով բոլո-
րովին թրջուել է մատը:

Մի ջրալից բաժակի մէջ ածենք փոքր
ինչ լիկօպօդիում ասուած բոյսի սերմ,
οր կարելի է ձեռք բերել գեղարանումը:
Յետոյ եթէ մատներս ձգենք այդ ջրի մէջ,
նա չի թրջուիլ այլ կը մնայ բոլորովին
ցամաք:

Այս երկոքին օրինակներից մենք տես-
նում ենք, οր շատ մարմինների մէջ կըպ-
չունութիւնը հեշտութեամբ է լինում,
շատերի մէջ դժուարութեամբ, և երբեմն
ամեննեին չի լինում:

Ապակեայ մաքուր դաւազանին կալչում
է ջուրը, բայց եթէ ճարպ քսենք դաւա-
զանին, էլ ջուր չի կպչիլ: Ապակեայ դա-
ւազանին սնդիկը չի կպչում, իսկ երկա-
թին կալչում է: Թաղթի վերայ գրելը կըպ-
չելուց կախումն ունի, եթէ թղթին ճարպ
է քսած, նորան թանաքը չի կպչիլ:

Ֆռուլ լեքը բաժակը եթէ փոքր ինչ
թեքես, ջուրը կսկսի դրսի կողքերից թա-

փուիլ: Աեղուկների թափուիլը այդ հան-
գամանիքից աղատելու համար, ամանների
բերնին մի առանձին դուրս ընկած պը-
ռունգ են աւելացնում: Գլկիրները եթէ
լայնաբերան ամաններով են ջուր բերում,
ջրի երեսին կլոր տախտակներ են ձգում,
որ լելսկալուց՝ ջուրը դուրս չը թափուի:

Երբ οր բաժակի մէջ ջուր ենք ածում,
նկատում ենք, οր ջուրը բաժակի կողքեր-
քի մօտերումը բարձրանում է, իսկ մէջ
տեղը բոլորովին հաւասար է լինում: Բայց
եթէ այս մի և նոյն փորձը սնդիկով ա-
նելու լինինք, կը տեսնենք, οր նա, ջրի
հակառակ, կողքերից կը ցածրանայ. այս
կարելի է տեսնել և ջերմաչափի խողովա-
կի մէջ: Այս նորանից է յառաջ գալիս,
որ ջրի մասունքների մէջ աւելի ձգողու-
թիւն կայ դէպի ապակին, քան թէ իրա-
րու մէջ, իսկ սնդկի մասունքները աւելի
ձգողութիւն ունին դէպի իրար՝ քան թէ
դէպի ապակին:

Ոյնպէս եթէ վերցնենք մի ապակեայ
նեղ և երկու կողմից բաց խողովակ, նորա
մի ծայրը մացնենք բաժակի ջրի մէջ, ջու-
րը նորա մէջ կը բարձրանայ այնքան, որ
գորա մակերեսով թէր բաժակի ջրի մակերե-
սոյթից բարձր կը լինի: Արքան նեղ լինի
խողավակը, այնքան աւելի բարձր կը լինի
ջուրը նորա մէջ: Մեծ ամանների մէջ
ջուրը չի կարող այսչափ բարձրանալ,
պատճառ՝ ապակու ձգողութիւնը այն-
քան շատ չէ, οր կարողանայ մեծ քանա-
կութեամբ ջուր բարձրացնել. ձգողու-
թիւնը չի կարող հրաժարեցնել ջրի ծան-
րութիւնը: Բայց նեղ խողովակի մէջ
ջրից մանում է մի բարակ սիւնակ, այն-
պէս οր ապակու ձգողութիւնը կարողա-

նում է այդ ջրեղին սխանի ծանրութեանը յաղթել և քարշել դէսի իրան։ Բայց եթէ ջրի տեղ վերցնենք մնդիկ և նորա վերայ կասարենք այս փորձը, կը տեսնենք որ խողովակի միջն մնդիկը բաւականաչափ ցածր է բաժակի մջ եղած սնդիկց։ Որովհեաև հեղուկի այս տեսակ բարձրանալը պեսի շատ է լինում և պարզ է երեսւմ մազաչափնեղ խողովակների մջ, այդ պատճառով էլ այս երեսիցը անուանվում է ճաղահանունիւն։

Դօքակուտկէն, փիլուն, սպնդանման և փոշեականակ մարմինները մազականութիւն ունենալով ներս ևն ծծում ջուրը։ Այդ մարմինները շատ ծակտիքներ ունին, որոնք նման են մեր վերը յիշած մազաչափնեղ խողովակներին։ դոյն այդ ծակտիքներով ջուրը սկսումէ բարձրանալ։ Այսպիս աւազը, շաքարը, չոր փայտը, մոխիրը և ուրիշ սոցտ նման մարմինները վարի կողմից որ թրջվում են, այդ թացութիւնը ներս ծծուվ հացնում են իրանց վերին մասներին։ Այն շինութիւնները որոնց պատճերը շինուած են ծակտակէն քարերից, այն էլ խոնկաւ տեղ, միշտ խոնաւ են լինում։ Մազականութեան վերայ է հմնուած ծծան թղթի գործածելը, որով ցամաքեցնում են նոր գրութիւնները։ Ըսրեղններից իւղային բեծերը մաքրելու համար, նոցա վերայ ծծան թուղթ են գնում և զորա վերայ քում տաքացրած արդուկ։ Կանթեղների և մոմերի մջ եղած պատրոյգները նորա համար են, որ իւղը կամ հալցրած ճարպը նոցա միջով բարձրանայ և հասնի բոցին։ Եթէ վերցնենք մի պատրոյգ, նորա մի ծայրը դնենք բաժակի ջրսւմը, իսկ

միւս ծայրը մի դատարկ ամանի մջ, առ ժամանակից յետոյ բաժակի բոլոր ջուրը կանցնի ամանի մջ։ Մազականութեան վերայ է հմնուած և քարերի ձեղքելը։ Դորա համար քարի մջ մի փոքր ծակ են փորում, և նորա մջ դնում են չոր փայտից շինած սեպեր։ Յետոյ այդ սեպերի վերայ ջուր են ածում, ջուրը լցվումէ փոյտի ծակտիքների մջ, այնպիսի ուժով, որ սեպերը սկսում են աւելի և աւելի լայնանայ և վերջապէս ձեղքել քարը։

Բայց ինչու համար ջուրը չի բարձրանում նաև քարի, ոսկու և ուրիշ պինդ մարմինների մջ։ Չէ որ դոքա էլ ունին ծակտիքներ։ Մենք գիտենք որ այնպիսի մարմինների միջով ևս կարելի է ջուր անցկացնել։ Հարկաւոր է միայն աշաղին ուժգործ դնել։ Բայց որ ջուրը չի բարձրանում այս տեսակ մարմինների միջով, դորա պատճառն այն է, որ հեղուկ մարմինները բաւականին խառնթիւն ունին և շեն կարող անցնել այսպիսի անչափ նեղ խողովակների միջով։ Մազականութիւններ ներգործում է միայն այնպիսի խողովակների վերայ, որոնք մարդու մազից աւելի քարակ չեն։

Ի՞՞.

Օ անդամնեան.

Երբ որ վերցնում ենք մի երկաթէ ուռմբ, մենք զգում ենք, որ նա քարշում է մեր ձեռքը զէսի ցած։ Աս ի՞նչիցն է։ Այդ նորանից է, որ ոսւմբը ծանր է։ Որքան ծանր լինի մարմինը, այնքան աւելի կը ձնչի ձեռքը, կամ որ և իցէ մի բան, որ դնում ենք նորա տակին։ Եթէ ոսւմբի փոխանակ քար դնենք ձեռաց վերայ,

դա ևս կը ճնշէ, բայց դորա Ճնշումը ուռւմ-
քից պակաս կը լինի, պատճառ, քարը
ուռւմքից պակաս Ճանրութիւն ունի: Ե-
թէ մի կառր փայտ դնենք, դորա Ճնշումը
աւելի քիչ կը լինի: Իսկ եթէ ձեռաց վե-
րայ զնենք բմբուլ, համարեա ոչինչ ճըն-
շում չենք զգալ, պատճառ՝ այդ մարմինի
ծանրութիւնը չափազանց քիչ է, կամ
ուրիշ խօսքով ասենք, դա խիստ թեթէ
է, Գնենք ձեռաց վերայ մի դատարկ բա-
ժակ, մենք քիչ Ճնշում կը զգանք: Բայց
եթէ բաժակը ջրով լցնենք և այնպէս զը-
նենք ձեռաց վերայ, մենք բաւականին ճըն-
շումն կը զգանք, պատճառ, ջուրը ծանր
մարմին է: Ինչ և իցէ ամենայն մարմին
քիչ կամ շատ Ճնշումէ իւր տակը եղած
բանի վերայ, ապա ուրեմն ամենայն մար-
մին ունի ժանրունիւն:

Եյդ Ճնշումը, որ ցոյց են ապիս մար-
մինները միմեանց վերայ, ասվում է հիշու:
Եմենքը դիտեն զանազան անուններ կշեռ-
ների, օրինակ, Փունտ կամ գրուանքայ,
փութ, մսխալ, լօտ: Վեր առնենք երկու-
մարմին, մեկը թող լինի մի մեծ սպունգ,
իսկ միւսը հրացանի գնտակի: Եյս երկու
մարմիններից որն է աւելի շատ տարածու-
թիւն բռնում: Յայտնի բան է սպունգը:
Սպունգի բռնած տարածութիւնը, կամ
ասենք նորա իսկ ծաւալը աւելի մեծ է
քան թէ գնտակինը: Եյդ մարմիններից
ո՞րը աւելի շատ կշեռ ունի: Ա հարկէ հը-
րացանի գնտակիր: Բայց այդ ինչից է յա-
ռաջ գալիս: Սպունգի մեջ բաղմածիւ-
մեծամեծ ծակտիքներ կմն, մինչդեռ կա-
պարի մեջ այդ ծակտիքները անչափ մանր
են: Հետեւարար կապարի ծաւալը թէ և
փոքր է, բայց նորա մեջ աւելի շատ պինդ

մասունքներ կան, քան թէ սպունգի մեջ,
որի ծակտիքները օդով են լիքը: Ոսկորա-
բար նենա են ասում այն մարմիններնն,
որոնք շատ ծաւալ ունին և սակաւ կշիռ: Ա-
րա հակառակ այն մարմինները որոնք
փոքր ծաւալ ունենալով մեծ կշիռ ունին,
ասում են ժանր: Այսպէս ասում են
սպունգը թեթև է, կապարը ծանր է:

Մարմինները կշռեթք՝ մենք նոցա հա-
մեմատում ենք փութի փունտի և այլ
կշռների հետ և համանում ենք թէ նո-
քա քանի անգամ ծանր են կամ թեկու և
փութից, Փունտից, եայլն: Իսկ եթէ ու-
զում ենք իմանալ թէ մի մարմին կշիռ
քանի անգամ շատ է կամ քիչ մի այլ
մարմինից, քանի որ նոցա ծաւալը հաւա-
սար է, այդ ժամանակ մենք գտնում ենք
մարմինների պէստիլուր կշռու: Ինչպէս որ
կշռելու ժամանակ մենք համեմատում ենք
մարմինները փութի փունտի և այլ կը-
շիռների հետ, նոյնպէս մարմինների տե-
սակարար կշիռը որոշելու ժամանակ հա-
մեմատում ենք նրանց զուտ ջրի հետ: Ու-
սումնականները ջրի տեսակարար կշիռը
ընդունիլ են միութեան տեղ, այս ինքն
ընդունել են որ նորա տեսակարար կշիռը
հաւասար մեկի (=1): Ուրեմն եթէ մեզ
տան, թէ արծաթի տեսակարար կշիռը
հաւասար է 10, այդ կը նշանակէ թէ զուտ
արծաթը 10 անգամ ծանր է ջրից: Կամ
թէ ուկու տեսակարար կշիռը = 19, մենք
կարող ենք ասել, եթէ վերցնենք մեկ խո-
րանարդ ոտնաչոփ ուկի և մեկ խորանարդ
ոտնաչոփ ջուր, ոսկին 19 անգամ ծանր
կը լինի ջրիցը: Լուսնոսկու տեսակարար
կշիռը = 21, ոնդ կինը = 13 $\frac{1}{2}$, կապարի-
նը = 11, պղնձինը = 9, անապինը և եր-

կաթինը = 7, սառուցինը = $\frac{9}{10}$, և զենափայտինը = $\frac{1}{2}$, անկափայտինը = $\frac{1}{4}$, և այլն:

Մէկ միարերնանի ապակեայ խողովակի մէջ ածենք սնդիկ, ձէժ և ջուր, և սկսենք սաստիկ ցնցահարել: Այդ երեքին մարմնները կը խառնուին միմեանց հետ, բայց խողովակը դնենք սնդանի վերայ և թողնենք մի առժամանակ թնայ: Մոզիկը խկոյն ցած կիջնի և կը նաահի յասակի վերայ, ջուրը կը սնդաւորուի մէջ տեղը, խոկ ձէժը ջրի գլխին կը փառուի: Առքաւ իրանց աեսակարար կշռին համեմատ կը դասաւորուին: Այնպէս եթէ ջրի վերայ կամաց կամաց զինի ածենք՝ կակսի լողալ ջրի երեսին: Պատճառ՝ զինին ջրիցը թեթեւ է:

Ե՞՞.

ՄՆԴԵՐԸ-ՌԵՆ.

Ենիակի մէջ շատ առարկաներ կան զըրուած: Այդ բոլոր առարկաները իրանց տեղերումը հանդարա ընկած են, թէ շարժում են: Ի հարկէ հանդարա են ընկած, չեն շարժում աեղերիցը: Իրաւ որ այդպէս է: Եթէ մենք ինքներս չը շարժենք նրանց իրանց աեղերիցը, նոքա միշտ հանդարա կը մնան: Բռնցքենք այժմ գնատին, քարին, փայտին, փշենք փետուրի վերայ: Վոքա կը շարժին այդ ժամանակ իրանց աեղերիցը: Ենո՞ւ այսպէս եղաւ: Չեզքի ուժը հարկադրեց նրանց աեղերիցը շարժել: Երբ որ շարժելու հարկադրող զօրութիւնը կը դադարի ներդործել նոցա վերայ, նոքա այնուշեաւ էլի կը շարժին փոքր ինչ ժամանակ, յետոյ

կը դադարին և կը նդունին իրանց առաջուան ահշարժ դրութիւնը:

Դոքա ի՞նչպիսի մարմններ են, անկեանք, թէ կենդանի: Անկեանք մարմններ են: Եյտ աեսակ մարմնները ինքն իրանց չեն կարող շարժել: Վոքա իրանց տեղերումը հանդարա են մնում և այդպէս էլ միշտ կը մնան, եթէ մի որ և է զօրութիւն դոցա վերայ ազդելով՝ շարժում չը պատճառէ:

Ա եր առնենք մէկ սեղինի գնատակ և գլորենք սենեկի յատակի վերայով: Կնչո՞ւ համար այդ գնատակը զլորուեցաւ մինչեւ պատը, որին զարկուելով յետ ցատկեց և շուտով սկսաւ կանդ առնել: Կնչո՞ւ համար նա պատին հասնելուց յետոյ էլ չը կարողացաւ իւր զլորուելով առաջուածութեամբ շարունակել: «Եորսա համար որ ճանապարհին նա հանդիպեցաւ արգելքի, և այդ արգելքն եղաւ ինքը պատը, որ թոյլ չը տուաւ գնատակին աւելի հեռու երթալ: Եւ որովհեաւ մենք այդ գնատակը բաւականին ուժով զըլորեցինք, այդ պատճառով նա զարկուեցաւ պատին և մի յետադարձ ոստիւն արաւ: Եթէ միշենք ինչ որ խօսեցել ենք առաձգականութեան մասին, հեշտ կը ինի մեզ հասկանալ դորա յետադարձ ոստիւնի պատճառը:

Եյժմ թող տանք գնատակը յատակի վերայով առաջուանից քիչ ուժով: Մենք կը տեսնենք, որ նա կանդ կասնուանեկի մէջ տեղումը: Հապա ինչո՞ւ համար մինչեւ ի պատը չը զլորուեցաւ: «Եորսա համար որ գնատակին հաղորդուած ուժը շատ սակաւ էր, թոյլ էր:

Առաջին անգամին գնտակը աւելի հեռու կը դրուէր, եթէ նորա շարժողութեանը արգելք չը դառնար պատը. իսկ երկրորդ անգամին գնտակը պատին չը հասած սկսաւ կանգ տունել և հանդարանել: Դորա պատճառը ահա ինչն էր: Յատակի անհարթութիւնը և օդը դանդաղացրին նորա շարժողութիւնը, և որովհետեւ մի և նոյն ժամանակ գնտակին շարժման մէջ ձգող զօրութիւնը շատ նուազ էր, դորա համար այդ արգելառիթները շուտով հեռացրին նորանից այդ զօրութիւնը և գնտակին հարկադրեցին հանդարանել: Եթէ թնդանօթից ռումբը արձակուի կողմէ նակի ուղղութեամբ, արդեօք այդ ռումբը անդադար կը նետուի՞ օդի միջով, թէ ցած կընկնի երկրի վերայ և կը հանդարանի մէկ տեղ: Յայտնի բան է նա կանցնի գեռ ևս մի որոշ տարածութիւն, որն որ այնքան մեծ կը լինի, որքան որ ռումբը թնդանօթից արձակող զօրութիւնը սաստիկ է եղել, բայց յետոյ նա կընկնի երկրի վերայ, այդ տեղ էլ մի առ ժամանակ կսկսի զլորուել, և վերջապէս կանգ կառնի մի տեղ և կը մնայ անշարժ: Եյդ շարժման ընդհատութիւնը անշուշտ կը պատահի, որովհետեւ մի կողմից օդն է արդելումնորան, միւս կողմից երկրն է քարշում գէպի իրան: Ակըռումը ռումբը դուրս է նետվում թնդանօթից այնպիսի ահազին ռւժով, որ երկրի ձգողութիւնը շատ նուազ ներգործութիւնն է անում նորա վերայ այդ միջոցին: Բայց երբ որ օդի խռոչներակութիւնը կը թուլացնէ այդ ռւժը, այդ ժամանակ երկրի ձգողութիւնը առաւել ևս կազդէ ռումբի վերայ և նա էլ կըսկսի աւելի և տելի ցածրանալ գէպի

երկիրը և վերջապէս ընկնել նորա վերայ: Բայց որովհետեւ երկրի ձգողութիւնը անընդհատ ներգործում է ռումբի վերայ, այդ պատճառով նա չի կարող ռւդեղ գըծով յառաջ շարժել, այլ կոր գծով, առ ռաջ գէպի վերայ, յետոյ գէպի վար: Երբ որ ռումբը կընկնի երկրի վերայ, այդ տեղ էլ մի առժամանակ կըսկսի գլորութիլ, բայց շուտով կը դադարի, պատճառ՝ երկրի անհարթ մակերևոյթը առաւել ևս կարգելէ նորա շարժումը: Եթէ այդ արգելքները չը լինէն, երկիրն էլ ձգողութիւն չունենար, այնուհետեւ ռումբն էլ, քարն էլ, մի խօսքով ամենայն մարմին, որ շարժումին տեղերից, անդադար կը շարունակուէր նոցտ շարժումը և երբէք չէին կանգ առնել:

Ուրեմն կարող ենք ասել թէ ամենայն մարմին որ անշարժ կայ մի տեղ, նա այդպէս էլ միշտ կը մնայ, եթէ մի որ և իցէ զօրութիւն չը ձգէ նորան շարժման մէջ: Ամենայն մարմին, որ շարժման մէջ է, շարժում է, նորա այդ շարժումը անընդհատ կերպով կը շարունակուի, մինչեւ մի որ և իցէ արգելք չը ընդհատէ, չը դադարիցնէ նորա շարժումը: Եհա այս յատ կութիւնը որ ռւնին մարմիններ՝ ասվում է անդուժութիւն:

Ենդործութեան վերայ շատ երկոյթներ կան հիմնուած, սրոնք սկզբումը մէկ անհասկանալի ին թվում: Եյսպէս երբ որ մենք վազում ենք արագութեամբ, չենք կարողանում մէկն ի մէկ կանգ առնել, մեր մարմնոյ անգործութիւնը կամենում է էլի փաքը ինչ յառաջ շարժել: Կառքի մէջ եղած ժամանակներս, երբ որ կառքը արագ երթալուց յետոյ յանկարծ

կանգնում է, մեր մարմինը արդեն ունեցած շարժումը յառաջ տանելով ընկնում է դեպի յառաջ : Առմ եթե որ ուղղում ենք կառքի վաղած ժամանակը դուրս նետուիլ նորանից, եթէ մեր ոստիւնը դեպի առաջ չանենք՝ վեր կընկնենք այդ կողմի վերայի Զինեթէ չափ է ընկնում՝ յանկարծ վերայի մարզը ընկնում է իւր քամակի վերայի իսկ եթէ չափ է ընկած միջոցին յանկարծ կանգնում է, չեծեալը երեսի վերայ ընկնում է ձիու դլիճն : Եյսօրինակի մէջ առաջին դիպուածումը անգործութիւնը չէր սկսել իւր շարժումը, երկրորդ դիպուածումը չէր ընդհանութիւնը այդ պատճառով էլ ձիու և չեծեալի շարժմանց մէջ անհաւասարակշռութիւն յառաջ եկաւ :

Ո՞վ չի տեսել թէ ի՞նչպէս են ձեղքում
փայտը։ Փայտ կտրատողը կացնի բերնով
զարկում է փայտին, և այս կերպով կացնի
բերանը մացնում է փայտի մջը, և յետոյ
այդպէս վերցնում է փայտը և կացինը
շրջելով քուփով խփում է կոճղին։ Այս
տեղ կացնի շարժումը ընդհատվում է,
բայց փայտը անգործութեան օրէնքով
յառաջ է շարժում և ձեղքում։

Եթէ հրացանի գնտակիր ձեռքով դուրս
նեսինք պատուհանի ապակու միջով, ա-
պակինք քանի մի կտոր կը լինի, կը փշը ի,
բայց եթէ հրացանից որձակենք այդ զբա-
տակը նոյնակէս մի ապակու միջով, այդ
ժամանակ ապակին չի կոտրառուիլ, այլ
այնքան կը ծակուի՝ ինչքան որ գնտակի
մեծութիւնն է, միւն բոլոր մասները կը
մնան անվնաս։ Այս տեղ առաջին զի-
պուածում ապակին նորա համար կոտ-
րուեց, որ ձեռքով ձգած գնտակի շար-

ժումը թոյլ լինելով, անցնելու ժամանակ
իւր ուժը հազորդեց բօլոր մասներին, ներ-
գործեց ամբողջ առակու վերայ, իսկ երկ-
րորդ դիպուածում հրացանից արձա-
կուած գնաակի շարժումը այնքան արագ-
էր, որ ժամանակ չուներ ներգործելու բո-
լոր մասների վերայ:

Աթե բաժակի վերայ մի խաղաթուզդ
դնենք և նորա վերայ մի դրամ արագ
հարուածով կարելի է թուզթը այնպէս
տեղահան անել որ վերայի դրամը հեար
չեթայ, այլ ընկնի բաժակի մէջ : Արք
որ կամենում ենք ջրմուղի վերայից ցատ-
կել միւս կողմը, մեր ոստիւնը աւելի աջո-
ղակ կը լինի, եթէ փոքր ինչ հեռուից վա-
զելով ցատկինք : Առանոր կոթի վերայ պըն-
դացնելու համար՝ կոթը յատակին են
զարկում : Արք որ կոթը զարկում ենք
դէպի ցած, չաքուն էլ անգործութեան
օրէնքով նորա հետ վար է իջնում դէպի
կոթի հաստ կողմը և այն ահեղ ամրանում
առօք : Խոր է ազդ ներս ոք քանութիւ-
նու որմանը տառա իերա հոգ զան զա-
տանուա մշյաման պահ առող մէ զար
գալքա Օքի յատկութիւնը զա բարա

ՍԵԿԱՔ արդէն զիտենք, որ մեր երկիրը
շրջապատող մարմինը ասվում է օդ։ ՄԵԿԱ
ՏԻՆՔ տեսնում օդը, դա մեզ չէ երևում։
Օդը այնքան թափանցիկ է, որ իրանույ
շրջապատուած մարմինները կարելի է շատ
պարզ տեսնել։ Գրային շողիները նոյն-
ովէս անտեսանելի են լինում, բայց նոքա
դիպչելով պաղ առարկաներին՝ փոխարկ-
վում են ջրի։ Բայց օդը ամենասաստիկ
գույք եղանակներին անգամ մնում է միշտ
օդակերպ։ Մինչև այսօր ոչ մի հնարքով

դորան չեն կարողացել ոչ թէ պինդ, այլ գոնէ հեղուկի դարձնել : Եյս կողմանէ օզի նմանութիւնունեցաղ մի քանի ուրիշ մարմիններ էլ կան, դորանցից մի քանիսի հետ մենք շուտով կը ծանօթանանք : Վռաձգականսիւղուկ մարմիններս մի ուրիշ անուն էլ են կրում իրանց վերայ, այդ անունն է Գաղ : Եյդ պատճառով օդն ևս գաղակերպ մարմին է :

Չը նացիլով որ երկրի ջրա կողմաւմը պրտըտավում են անհամար թուով օդի մասունքներ, այսու ամենայնիւնոքատեղի են տալիս մեզ յառաջ երթալու և թոյլ են տալիս աղատ շարժելու : Եյս ինչիցն է : Սորա պատճառն այն է, որ օդի հիւլները, ինչպէս մենք արդէն դիտենք, միմեանց մեջ ոչ ինչ կցում չունին : Եյդ հիւլները մինչև անգամ աշխատում են հեռանալ միմեանցից և աւելի մեծ առած ծութիւն բանել, և թէ միայն չեն հանդիպում որ և իցէ արդելքի : Ա եր առնենք մի բաժակ, գա այժմ լիքն է օդով : Դորա մէջ տեղը եղած օդի մասունքները արգելք են լինում վարի մասներին բարձրանալու, մեջ տեղի մասունքներին արգելք են լինում բաժակի վերայի եղած մասունքները : Աշէ հնար լիներ վերին մասները հեռացնել, այդ ժամանակ վարին մասները խիզն կը բանեին նոցա թողած տարածութիւնը և այսու ամենայնիւ բաժակը էլի լիքը կը լիներ օդով : Ա եղուկների հետ այսպիսի բան չի պատահում : Աշէ ջրով լիքը բաժակից փոքր ինչ ջուր պակասացնենք, մեջ մասցած ջուրը այդ պակսածի տեղը չի բանել, չի բարձրանալ օդի պէս իրանից հեռացած մասունքների թողած տարածութիւնը լցնելու, այլ ջրի այդ

թերատ տեղը իսկոյն կը բռնի օդը : Եյդ իսկ պատճառով դադակերպ մարմինները պահպանելու համար, հարկաւոր է պինդ կնքած ամանների մեջ պահել :

Խեկալէտ և օդի մասունքները միմեանց հետ կցում չունին, բայց այսու ամենայնիւնքա ցոյց են տալիս ընդդիմութիւն : Մի թերթ թուզիթ վերցնենք և երկու ձեռով բռնենք հանդիպահայեաց կողմերից, և սկսենք յառաջ երթալ այդպէս՝ նախ կամաց կամաց և յետոյ մկնենք վազել : Օդը կոկի ընդդիմանալ թղթի շարժմանը և դէպի յետ կը թերթ նորան : Որքան արագ վազենք, այնքան այդ թերթումը սաստիկ կը լինի : Ուրեմն որքան որ մարմինը արագ է շարժում, այնքան առաւել ընդդիմութիւն է գանում նա օդի կողմից : Զինարագ չափ զցած ժամանակ օդը այնպէս է գարկվում մեր երեսներին, որ կարծում ենք թէ սաստիկ քամի է մինչդեռ եղանակը շատ հանդարտ է :

Խաչու և յառաջ բայց երեսներու գոյնը :

Պատու հանի սպիտակ աղակու բարակ թերթը թափանցիկ է և անգոյն, բայց երթէ մի քանի հատ սյսպիսի թերթիկներ վերցնենք և միմեանց վերայ գարսենք և ապա նայենք նորանց միջովը, այդ ժամանակ գերին մեզ կապրատախառն կանանչ գոյնով : Եյդ գոյնը կը տեսնենք նաև, և թէ նայենք թերթի երկայնութեան ուղղութեամբը : Եյս մի և նոյն է պատահում և օդի հետ : Փոքր քանակութեամբ օդը բոլորովին թափանցիկ է, իսկ մեծ քանակութեամբ երեւում է մեզ երկնագոյն, այսինքն բաց կապոյտ գոյ-

Նույ : Յօհե երկնքիր կապոյտ զոյնը օղից կա-
խումն ունի, այդ արգելու աղացոցուածէ։
Քարձր լեռների գագաթներից՝ որ նայում
էն երկնքին, նա բոլորովին սևէ երևում,
որովհետև սարերի վերաց օգը անօսրէ,
այնքան խառնթիւն չունի՝ որ կապտու-
թիւն յառաջ բերէ։

Արդէն շատ վաղուց զիանականներին յայտնի էր հետևեալ հանդամանքը։ Աթէ ջրի մէջ ընկղմենք երկար խողովակի մէկ ծայրը՝ այդ խողովակի մէջ մասնենք մի մասց, այնպէս որ ծայրը համնի մինչև ջրի երեսին, յետոյ սկսենք վեր քաշել մխոցը, ջուրը կսկսի մխոցի ետևեց վեր բարձրանալ։ Առաջուան գիանականները սկզբում այս երեսոյթը այսպէս էին բացարառում, թէ բնութեան մէջ չի կարող լինել դատարկ ապրածութիւն, ասում էլ էին մինչեւ անգամ թէ բնութիւնը վախճառում է դատարկութիւնից։ Ո՞ւ անգամ հարկաւոր էր 50 ոտի բարձրութեան ջուր վեր քաշել, կարծում էին թէ ջուրը այդքան էլ գորանից աւելի էլ կը բարձրանայ, բայց ի՞նչ, ջուրը միայն 34 ոտը բարձրացաւ, էլ այն տեղէն վեր ենել չը կամեցաւ, և մի և նոյն ժամանակ մխոցի և ջրի արանքը մնաց բոլորովին դատարկ։ Այս տեղ գիանականները իրանց առաջուան տուած սահմանի և բացարառութեան հակառակ երե-

ւոյթի հանդիրովելով՝ մնացին սպառած, չի-
մացան թէ ինչպէս մեխին այդ երեղիթը:
Խրաւ որ զարմանալի է: 34 ոտք բարձրա-
ցել է եւ չի կամենում տեղիցը շարժել,
ուս ի՞նչ կը նշանակէ: Ա երջափէս երեկի
օնօրիչելին ցոյց տոււաւ՝ թէ ջրի այդ գա-
դարումը օդի ձնշումից կախումն ունի, թէ
դրսի օդը իւր ծանրութեամբը միայն այն-
քան է ձնշումը ջրին, որ նա կարողանում
է դասարիկ, օդի չեղած աարտնութեան մէջ
վեր բարձրանալ միայն 34 ոտք: Օնօրիչել-
ին իւր աստծը պիորձով հաստատելու հա-
մար, այս մի և նոյն գործողութիւնը սրն-
դիկով կատարեց: Կա ասոց՝ սնդիկը տա-
պն երեք ու հէս անգամ ջրիցը ծանր է,
ուրեմն եթէ ջուրը օդի ձնշմամբը բարձրա-
նում է 34 ոտք, ոնդիկը պէտք է բարձրա-
նոյց գորանից 13 $\frac{1}{2}$ անգամ քիչը որ ասել
է թէ 34ը բաժանած 13 $\frac{1}{2}$ տեղ, որ եթէ
բաժանենք՝ կըստանանք համարեա 30 մատ-
նաշափ, կամ մի արշինից մի քիչ բան
աւել: Խւ ծշմարիտ որ անդիկը բարձրա-
նում է միայն 30 մատնաշափ: Ճախաւ:

Օդի ձնշումը աւելի շօշափելի կացու-
ցանելու համար կարող ենք հետեւեալ
հասարակ փորձը անել: Ա երցնենք մի
ի՞նչպիսի և իցէ խողովակ երկու կողմէն
բաց: Բաց բերաններից մէկը մատով
սխմենք, որ օդ չը մտնի, միւս ծայրը
դնենք բերաններս և դուրս ծծենք նորա
մէջ եղած օդը: Այսպէս օդը բաւականա-
չափ գատարիկելուց յետոց, խսկոյն այդ բե-
րանն ևս սխմենք մատով՝ որ ոչ մի բերա-
նից օդ չը մտնի ներս, յետոյ մէկ ծայրը
ջրի մէջ ընկղղմելով բաց անենք ջրի մէջը
եղած բերանը, իսկ դրսի բերանը, սխմած
պահենք: Ջուրը կակսի վեր բարձրանալ

խողավակի, միջով, և եթէ լսաւ դատարկած լինենք օդը, բռնթրովին կլցուի խողովակը: Եթէ դրսի բերանը փակած պահելով խողովակը դուրս չեմ թափուի վայր, այլ կը մնայ խողովակի մջը, չը նայելով որ բաց է վարի բերանը, բայց եթէ վերի բերանն ևս բանանք, ջուրը կոկմի թափուիլ ուրեմն ու ուր ձարը Այժմ բացատրենք այս երեսյթը: Ի՞նչ չարկալրեց ջրին առաջ բարձրանալ, յետոյ վայր հեղուլ: Ի՞ննենք ուշի ուշով, անսնենք ինչ է պատահում օդի հետ այդ փորձի ժամանակ:

Այրը որ բերանավ խողովակի օդը գուրը ենք ծծում, նորա մէջի օդը եթէ բարձրովին չի դուրս դալիս, գոնէ շատ քչանում է, անօրտանում է: Դորա հակառակ, դրսի օդը գորա պէս անօր չէ, նորա իր տութիւնը այնքան է ինչքան որ խողովակի մէջ եղած առաջուան օդի խոռութիւնն էր: Դրսի օդի մէջ աւելի շատ անհաններ կան, քան թէ խողովակի օդի մէջ: Ինական է որ շրջապատող օդը ծանր է խողովակի օդից, ուրեմն և աւելի ճնշում կազդէ ջրի վերայ՝ քան թէ նա: Այդ պատճառով ջուրը դրսի օդից ճնշուելով և խողովակի միջեց ոչ մի արգելքի չը հանդիպելով, կոկմի բարձրանալ դէպի վեր: Ճանում ենք խողովակը ջրից, բայց ջուրը մնում է խողովակի մէջ, չի թափում: Այս տեղ ևս մի և նոյն օդի ճնշումն է ներգործողը: Օդը դրսեից ճնշելով, արգելք է լնում ջրի թափուելուն: Բայց միւս բերանը բանալուն պէս, խոկցն թափում է ջուրը, պատճառ օդը երկու կողմից էլ սկսում ճնշել ջրի վերայ: Այրը որ ճնշումը երկուսուիք հաւասար է, այդ ժա-

մանակ ջուրը իւր ծանրութիւնը բռնող նեցուկ չունենալով, սկսում է վայր հոսել: Ռանալիքի ծակից եթէ դուրս ծըծենք օդը և խսկոյն գնենք լեզուի վերայ, նա կը կոչի լեզուիցը: Դրսի օդի ճնշումն է նորան այդ դրութեան մէջ պահօղը:

Ուրեմն մենք տեսնում ենք, որ օդն էլ ունի ծանրութիւն, բայց շատ փոքր է, համեմատելով ուրիշ մարմինների ծանրութեան հետ: Եթէ միաչափ ծաւալով ջուր և օդ վերցնենք, օդի ծաւալը 700 անգամ թեթև կը լինի ջրից, կամ որ մի և նոյն է ասել օրինակի համար, մէկ ֆունտ ջուրը որքան տեղ որ բռնում է, օդը 700 այնպիսի տեղ է բռնում: Մէկ խորանարդ ունաչափ օդը կշռում է $8\frac{1}{2}$ մախալ:

Գիտնականները հաշուելով խմացել են, որ օդը մարդու վերայ այնքան ճնշումըն ունի, որքան որ 30,000 Փաւնտը (750 փութ): Այսպիսի ահազին ծանրութիւնը կարող է մարդուն բոլորովին ճնշել, բայց մարդու մարմնու մէջ ևս օդ կայ, որի խրտութիւնը հաւասար է դրսի եղած օդի խառութեանը. դորա համար այդ ճնշումները փոխարձաբար հաւասարակշռվում են, և մարդու վերայ օդի ծանրութիւնը ներգործութիւն չի անում: Այդ խկ պատճառով սապոնի սղպաջակները չեն պայման: Վանաւանդ որ օդի ճնշումը լինում է ամեն կողմից, այդ պատճառով չեն արգելում մարդուն շարժելու: Բայց եթէ ճնշումը լինի միայն մէկ կողմից, եթէ յանկարծ մի կողմից օդը վերանոր և դատարկ տարածութիւն բացուէր, միւս կողմից օդի ճնշումը այնքան սաստիկ կը լինէր, որ կը ճնշեր մարդուն և կսպանէր: Այսպէս օրինակի համար, եթէ մի թղթի

կառը վառելով ձգենք բաժակի մէջ և իսկոյն ձեռքով ծածկենք՝ ձեռքը կը կպչի բաժակից։ Եթէ այդ մի և նոյն փորձը աւելի ծշութեամբ, մարմնի աւելի քընքու տեղի վերայ անենք, կաշին կը զջլուի, պատճառ՝ բաժակի մէջ օդ չը լինելով՝ մարմնու օդը սաստկապէս կը հրէ կաշին դէպի վեր։

Օդի ձնշումը ամեն անգամ միաշափ չի լինում; Երբեմն շատ է լինում՝ և երբեմն սակաւ։ Երբ որ օդը անօսր է, ձնշումն էլ քիչ է լինում, պատճառ՝ այդ ժամանակ օդի միջ քիչ անհատներ կան։ Օդի ճշնշումը չափելու համար մի գործիք են հընարկել, որ անուանվում է ծանրալսի, այսինքն օդի ձնշման ծանրութիւնը չափող։ Ծանրաշափ պատրաստելու համար ընտրում են այնպիսի մի առակեայ խողովակ, որ ունենայ նեղ և հաւասարչափ տրամադիմ։ Այդ խողովակի մի ծայրը կրաց նոում են։ Այսպէսով ծանրաշափը ունենում է երկու մասն կամ երկու սրունք, մէկը կարծ և միւսը 30—40 մատնաշափ երկայնութեամբ։ Ծանրաշափի կարծ սրունքի ծայրը բաց են թողնում, իսկ երկայնի բերանը զօղում են։ Կարծ սրունքնի ծայրը երբեմն կըրցնում են և կիսագնորի ձև են տալիս, բոլոր խողովակը մնդիկով լցնում են, այն ամեն զդուշութիւնները պահպանելով, ինչ որ ասել ենք ջերմաշափ պատրաստելու համար։

Իոլորովին պատրաստի խողովակը դընում են շրջանակի միջ, որի վերայ ամբացնում են և մի շարժական տախտակ, այդ տախտակի վերայ գծեր են քաշում մի մի մատնաշափ հեռաւորութեամբ։ Որովհետեւ կարծ սրունքը բաց է, և այդ տեղից է

մկսում օդը ձնշիլ մնդիկ վերայ, այդ պատճառով դարա մէջ սնդիկը ցածրանում է, իսկ երկայն սրունքի մէջ մնդիկը քանի մասնաշափ է ցածրացել կամ բարձրացել, այդ ժամանակ յիշեալ շարժական տախտակը առաջ են քաշում այնպէս, որ նորա վերայ նշանակած զօն կարծ սրունքի մէջ եղած սնդիկի մակերևոյթին հաւասար լինի։ Այսպիսի ծանրաշափը ասվում է Անփոնեան ծանրաշափ։ Այն և ուրիշ տեսակ ծանրաշափներ։

Արքան վեր ենք բարձրանում սարի վերայ, այնքան օդի ձնշումը սկսում է պակասիլ։ Այդ հասկանալի է։ Բարձր սարերի վերայ եղած օդի մասունքները քիչ ձնշողութեան են ենթարկուած, քան թէ սարի սառորոտումը՝ որ տեղ աւելի շատ օդի մասունքներ կան։ Այդ պատճառով ծանրաշափը կարելի է գործ դնել և սարերի բարձրութիւնը իմանալու համար։

Գիտնականները նկատել են, որ ամեն մի մատնաշափ սնդիկի ցածրանալիս սարի բարձրութիւնը աւելանում է հետ զհետէ աւելի շատ և ոչ հաւասարաշափ։ Երբ որ ծանրաշափի բարձրութիւնը մինչեւ 29 երրորդ մատնաշափը ցածրանում է, սարի բարձրութիւնը լինում է 980 ոտնաշափ, եթէ հասնում է 28 երրորդին, բարձրութիւնը լինում է 1820, եթէ 27 մատնաշափ է սնդիկի բարձրութիւնը, սարը լինում է 2790։ և այն։

Չիմբորասօ լեռան վերայ, որ 20800 ոտնաշափ բարձրութիւն ունի, ծանրաշափը ցոյց է տալիս 13 մատնաշափ։ Դա-

Հայագիրի վերայ 25,000 ռանազամի բարձրութեամբ — միայն 11 մատնաչափէ Եղբ որ մի որ և իցէ տեղ օդը տաքաշնում է նա մի և նոյն ժամանակ լայնանում է և անօսրանում, և այդ պատճառով նորա ճնշումը պահպում է: Եյապիսի դիպուածներում ծանրաչափի արնդիկը ցածրանում է: Սորա հակառակ պաղ և թանձրացած օդը աւելի է խոանում, և այդ պատճառով աւելի էլ ճնշ շում է և սնդիկը բարձրանում է ծանրաչափի մեջ: Հարաւային և արևմտեան հողմերը բերում են մեզ մօտ խոնաց և աւելի տաք, ուրեմն և թեթև օդ՝ դուա համար այդ պիսի ժամանակիները ծանրաչափի մեջ սնդիկը բարձրանում է: Խոնաց օդը յառաջ է բերում անձրեներ, խոկ ցամաք օդը պարզ եղանակ: Արեմն ծանրաչափի մեջ սնդիկի բարձրանալն ու իջնելը կարող է ցոյց տալ վերահանելի կամ ներկայ եղանակը: Այս հանդամանքը վաղուց է նկատուած և մարդիկ ծանրաչափը համարել: Են նախագուշակող եղանակի: Եյդ նպատակի համար հարկաւորութիւն չփայ ծանրաչափը բաց օդում պահելու Դրսի օդը սենեակի մեջ է մանում և այդ պատճառով օդի ճնշումը ամեն տեղ միանան: Է: Սովորաբար ծանրաչափիների վերաց դրում են, որ եղանակ որ համապատասխանում է սնդիկի այս կամ այն բարձրութեանը (պարզ, վորոխական, անձրև, փոթորիկ): Պակայն հարկաւոր է ասելոր ծանրաչափը ամեն ժամանակ աշդու-

թեամբ չի ցոյց տալիս եղանակիք: Այդ
հանգամանքը ծանրաչափի անծշփութիւն-
նից չի յառաջ գալիս, այլ եղանակն ին-
քը կախում ունի բազմազան պատճառ-
ներից, որոնք շատ անգամ չեն ներգոր-
ծում ծանրաչափի անդիկի վերայ:

Եկան անբարեկ առ առնան յարձակ
Խէ. որի կար ուժում
ՀՀ պատմի նարան մաս ու ուղիղ միջուկը (Օ)
անելու ՕՇԵ ՇԵՂՄ-ԻՒ ԿԱՅ ՇԵՂՄ-ԻՒ:

Գյխնականները հաշուել են որ երկի-
րը լինապատած է օգով, որպէս մի այն-
պիսի թաղանթով, որի հաստութիւնն է
70 վերատ: Այդ օգեղէն թաղանթին հա-
մառօտութեան համար ասում են ՏՊԱ-
ՐՅԱ: Աթնողորդի վերին մասներումը օղը
անօսր է, պատճառ՝ այն տեղ ոչ մի ծըն-
շում չը կայ: Իսայաց որբան մօտիկ է երկ-
րից օդը, այնքան նաև խիտ է, պատճառ՝
ստօրին մասանց վերայ ճնշում են օդի
վերին մասները: Այդ պատճառով երկրի
մակերեսոյթի վերայ եղած օդը սեղմուած
է և մենք կենում ենք այդ սխմուած օդի
մէջ:

Տեսնենք այժմ թէ կարել՞ է արդեօք
առելի և ա ՃՆՇԵԼ օդը:

Վեր առնենք մէկ ծայրը զօդած խո-
ղովակ մխոցի հետ: Խողովակի մէջ սակա-
նիչ ջուր ածենք և նորա մէջ մացնենք
մխոցը: Այնպէս պէտք է բռնել խողովա-
կը, որ զօդած ծայրը վերի կողմնւմը լինի,
խակ մխոցը վարի: Այդ ժամանակ ջուրը
կընկնի մխոցի վերայ, խակ ջորի վերայ կը
հաւաքուի օդը: Ոկանեք ներս հրել մխոցը:
Մխոցը կը ՃՆՇԵ ջորի միերայ, խակ ջուրը կըս-
կի առելի և առելի սխմել օդը: Այդ պատ-

ճառով խողովակի մեջ եղած օդի ծաւալը կակսի քիչ քիչ պակասել, ուրբեմն օդը ձնշվում է, սեղմվում է: Որբան աւելի ենք սխմում խողովակի օդը, այնքան նա աւելի է աշխատում տարածուել, ափուուել դիւ պի ամեն կողմ, այսինքն աւելի մեծ տարածութիւն բռնել: Եթէ չափազանց ներս հրենք մխոցը, խողովակը կը ձեղքուի, կը կոտրուի, պատճառ՝ օդը սաստիկ ձնշելով խողովակի կողքերի վերայ, կը հեռացնէ ապակու մասունքների կցումը: Բայց հենց որ ընդհատենք մխոցի ներս հրումը և ձը սխմենք այլ ևս օդը, նա ել ոչ մի արգելք չունենալով, կակսի լայնանալ և դուրս կը նետէ ջուրն ել մխոցն ել: Ուրեմն օդը կարող է, համ ձնշուիլ համ լայնանալ, և պատճանում է առաձգական մարմինների կարգին: Արագ մի կերպառնենք մի փոքրիկ սըրուակ, կիսով չափ ջրով լրցնենք և բերանը փակենք մի ծակի խցանութ, խցանի ծակից սրուակի մի ժողովակ, սուր ծայրը վերևից, իսկ միւս ծայրը հասցնենք մի սրածայր խողովակ, սուր ծայրը վերևից, իսկ միւս ծայրը հասցնենք մի սրուակի մի ժողովակին: Խցանը լաւ ամրացնենք զմուռով, կամ մոմով, որ ամենեւին օդ դուրս գալու տեղ չը լինի խողովակի ափերից: Ուստի խողովակից շունչ ներս փէտլ, մեր բերանով սրուակի մեջ: Օդը ջրի միջով անցնելով սրպջակների ձեռով կը հաւաքուի սրուակի վերին մասնումը: Այդ պատճառութ այն անուանուի օդը սկսում է հետո աւել ընկնում: Արդին կտորիկը մնում է խողովակի կիսումը, երեխան ծխոտով հրում է հասցնում ծայրին և սկսում նորա ետելցը ել մի ուրիշը հրել, սա ևս խողովակի կիսուն հասած չը հասած ծայրին եղած կտորը առաջուանի պէս դուրս է ընկնում տըժժամով: Այս տեղ աշկարայ երեւում է օդիներգործութիւնը: Երկոքին կտորների արանքը օդով է լիբը: Երբ որ մեկ կտորը հրվաճմ է դէպի միւսը՝ օդը սխմենամ է, որով է ճնշում է միւս ծայրին եղած կտորի վերայ և դուրս նետում նորան:



մանակ ձնշուած օդը մեծ ասպածութիւն բռնելու ձիգ ցոյց տալով, կակսի ձնշել ջրի վերայ, ջուրը կակսի բարձրանալ խուղովակովը և դուրս ցայտուել շատրուանի պէս: Այս տեսակի ջրուղիները կամ շատրուանների աղբեր, պատճառ՝ դորա առաջին շինողի առնունը եղիղէ աւերոն: Մեծամեծ շատրուանների դորձողութիւնն ևս այս մի և նոյն օրէնքովն է յառաջ գալիս: Մանուկները շատ անգամ զուարձաւ նում են հետեւել խաղալիքովը: Այդ խաղալիքը մի որ և իցէ բանից շնանաձ՝ մի խողովակէ երկու կողմէն բաց, մեկ փոքրիկ ձիպու և մեկ ել կարտոփիլից կտրած գնդակներ կամ հասարակ կտորներ: Երեւ խան վեր է առնում այդ կարտոփիլի կտորիկը գնումէ խողովակի մեկ բերան ուրմը, և ձիու պոտով հրելով հասցնում է մինչև միւս ծայրը և թողում է այն տեղ, յետոց վերցնում է մի ուրիշ կտոր, այն ևս սկըրտում է առաջինի պէս հրել: Բայց առաջին կտորը գեռ այս վերջինէն չը զարդ կուած գուրս է արձակվում վզզալով: Երաւականին հետեւ տեղ ընկնում: Արդին կտորիկը մնում է խողովակի կիսումը, երեխան ծխոտով հրում է հասցնում ծայրին և սկսում նորա ետելցը ել մի ուրիշը հրել, սա ևս խողովակի կիսուն հասած չը հասած ծայրին եղած կտորը առաջուանի պէս դուրս է ընկնում տըժժամով: Այս տեղ աշկարայ երեւում է օդիներգործութիւնը: Երկոքին կտորների արանքը օդով է լիբը: Երբ որ մեկ կտորը հրվաճմ է դէպի միւսը՝ օդը սխմենամ է, որով է ճնշում է միւս ծայրին եղած կտորի վերայ և դուրս նետում նորան:

Վատ անգամ հարկաւոր է լինում մը շակներին ջրի տակին աշխատել, օրինակ, երբ որ մի որ և իցե նաւկութիւն է և նուրա մէջ եղած ապրանքները ընկղմվում են ջրում և իջնում յառակի վերայ ։ Եյսպիս սի աշխատութեանց ժամանակ դործ են դնում զբանոյ զանդակ ասուած գործիքը ։ Եյդ զանդակը շինուած է հետեւեալ կերպով : Կերկայացրէք ձեզ մի քառակուսի ձևով մեռաղից շինած արկդ, այնքան մեծութեան՝ որ մի մարդ կարողանայ նորա մէջ արձակ կերպով տեղաւորուիլ : Եյդ արկդի վերայ մի քանի այլ և այլ ծանրութիւններ դարսելով ընկղմում են ջուրը, բաց կողմը գեղի վար: Զըրի մէջ իջնելու ժամանակը պարաններ կան զանդակի վերի կողմից ամրացրած, այդ պարաններից բանում են, որ շատ արագութեամբ չիջնի զանդակը, յետոյ էլ այդ պարանովն են վեր քաշում զանդակը՝ երբ որ գործը վերջանում է: Զանդակի ներսը մի կողքի վերայ փոքրիկ նստարան կայ ամրացրած, նորա վերայ է նստում մարդը զանդակը իջնելու ժամանակի: Երկդի վերայ մասներում մի քանի բացուածքներ կան, այդ բացուածքները հաստ հաստ ապակիներով են փակուած, որոնք պատուհան նրան պաշտօն են իստարում, պատճառ նրանց ցով լցու է թափանցում արկդի մէջ: Արովնեաւ օդը ընդդիմահարութիւն ունի, այդ պատճառով ջուրը չի կարողանում զանդակը բոլորովին լցնել, այդ պատճառով նորա մէջ բաւական անջուր ատարածութիւն է, մնում, որ թե օդով լիքը լինելով, սուզակը (մէջի եղած մարդը) կարողանում է աղատ չունչ քաշել: Բայց այդ օդը շուտով անպիտանում է շըն-

շառութեան համար, այդ պատճառով հարկաւոր է լինում նոր և մաքուր օդ հանդեւսուղակին: Դորա համար զանդակի վերեխ ու զինի խողովակներ կան ներս մացրած, որոց վերին ծայրը դուրսն է և այն տեղից այդ խողովակների միջով առանձին գործիքների օգնութեամբ նոր օդ են մտցնում զանդակի մէջ: Եյդ զանդակը շինուած է կամակատարուելիք, օլինակի համար: Շատ անգամ հարկաւոր է լինում գետերի տակից ջրմուղի խողովակներ դարսել կամ մի քանդուած բան վերանորոգել, այդ ժամանակ զանդակ չեն գործ դնում: Առզակը այնպիսի հագուստ է հագնում, որ նորա ամեն մասերը սկսմուած են մարմար վերայ, և այնպիսի կտորից են կարուած, որ ջուրը չեն ծծում: Ներս, որով հեշտ է լինում սուզակի համար ձեռք ու ոտքը թեթևութեամբ շարժելու ջրի մէջ: Օաննը կօշեկներ է հագնում, որ ամուր կերպով կանփնէ ջրի տակին: Առրա շընքին ձգում են պղնձէ վզնոց, որ կարուած է շորերիցը: Պալսին հաղցնում են մի պլղնձէ գնտակ սաղաւարդի նման և այդ գնտակի ափերը ամրացնում են վզնոցի վերայ: Եյդ գնտակը աչքերի ուղղութեամբ երկու բացուածք ունի հաստ ապակիներով փակած, և նրանց միջով լցու է համնում սուզակի աչքերին: Եյսպիս տմեն բան այնպէս շինուած է, որ ոչ մի տեղից ջուր չի անցնում նորա մարմար վերայ, մանաւանդ բերանի մօտ տեղերը: Պակասում է միայն օդը, եթէ այդ էլ լինի, այնուհետեւ մարդը կարող է երկար ժամանակ ջրի տակ մնալ և կասարել հարկաւոր եղած գործը: Պանտակի վերի կող-

մից ձաւդուկ խողովակ կայ մտցրած, դորա
մի ծայրը դուրսն է, դորա միջով ահա օդ
են հասցնում սուզակին: Այս արշեստա-
կան կերպով ներս մտցրած օդը աւելի խիտ
ու սխմուած է լինում, քան թէ սուզակի
մարմնի մէջ եղած օդը, այդ պատճառով
այդպիսի օդը սկսում է ձնշլ մարմնու
վերայ և զանդակի մէջ եզած մտրդը մեծ
ցաւ է զգում աչքերումը, ականջներումը,
կուրծքումը:

Օդի սեղմուելու վերայ է հիմնած և
օդական հրացանների շնուռածքը: Այդ
տեսակ հրացանների զոնդաղի մէջը դա-
տարկ է լինում և չափամասի միջնորդու-
թեամբ հաղորդուած խողովակի հետ:
Դնուակը գցում են խողովակի մէջ, իսկ
զոնդաղի միջի օդը առանձին գործիքով են
թանձրացնում: Երբ որ ջախմախը դարկ-
վումէ, զոնդաղի սիմուած օդը մտնումէ
խողովակի մէջ և այնպիսի ուժով մղում
է գնտակին, որ նա վզզալով դուրս է նետ-
վում: Այս տեսակ հրացաններից լաւ շե-
նուածները՝ ոչ միայն վառօդի հրացան-
ների պէս կարողանում են չեռաւ նետել
գնտակը, այլ և ձնշուած օդին համեմատ,
մէկ լցնելով շատ անդամ էլ կարող են
ձգել:

(Շ-Ր-Ջ-Ն-Ա-Ք-Ե-Լ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԴԵԳԻՐ

Նոր — Նախիչեւանարնակ մեր սիրելի եւ բա-
րեպաշտ ազգայինը, — որը ազգօգուտ գործոց եւ
ջանից մէջ նախլնեաց հանդիսանալոյ փառքը ժառան-
գելոյ մրցմանց յաղթանակը վայելելոյ համար խրեանց

բարի նախանձը եւ ողելատ եռամդը յաւէտ արդեամբը
հոչակած են, — Մայր Աթոռոյս նորակառոյց ձեմա-
րանի շնուռեամ աւարտին մերծ լինելն եւ սուզ
միջոցով բացուելոյ պատրաստութիւնքը լանձ, եւ մա-
նաւանդ Վեհ. Հայրապետի հրաւիրանաց եւ յորդորա-
նաց կոնդակին շարժեալ եւ ոգեւորեալ յատկապէս
տեղոյն համայն Հայպանեայ հապարակութեան ի դի-
մաց կանոնադրեալ պատզամաւորներով, քաղ վարչու-
թեան Խորհրդարանի անդամներով եւ ընդ նախագա-
հութեամբ քաղաքաղութեամ Մեծ: Գէորգ Խօջայեանցի,
Ընդհանուր ժողով կիազմեն, — ինչպէս յիշեալ քաղա-
քաղութեամ փութացի էր հաղորդել Վեհ. Հայրապետի
մերում, — եւ օրինաւոր եղանակաւ տնօրինել են Ա-
Էջմիածնի ձեմարանի մէջ հինգ որդեղբաց ծափքը
տարեկան մի համար հինգ հարիւր ուուրի ամ ըստ
ամէ նուիրել:

Ուստի Վեհ. Հայրապետ Հորինակաղութեան եւ օրի-
նութեան կոնզակ ուղղեց:

Նոր — Նախիչեւանարնակ մերազնեայց այսպիսի
ցնադ բարեգործութիւն արդարեւ արժանի է ինչպէս
մեր, նոյնպէս համայն Ազգիս խորին շնորհակալու-
թեանց, միանգամայն կանձկամբ, զի նոյա սոյնպիսի
վսիմ եւ եկեղեցաշէն գործ այլոց քաղաքաց եւ տե-
ղեաց մերազնէից բարենախանծ օրինակ եւ խրախոյս
ներգործէ որպէս զի Վեհ. Հայրապետս մեր յաջողի
ձեմարանի տարեկան ժախուց գոնէ կէսը Ազգայնոց
նպաստիք, եւ մնացեալ եւս այլ աղքիկներէն ապա-
հովել:

ԹԵՇ. ԴՊԲԱՆՈՅ ՑԱՍՏՐԱԿԱՆ

Աստրախանայ վիճակն մինչեւ ցարդ չունէր յատուկ
թեմակամ Դպրանոց, ուր Հայ մանկունք կարող լինէին
ըստ արժանային կատարելագործել մայրէնի լեզուն եւ
կարեւոր այլ գիտութիւնքը, եւ ի ժամանակին եկեղե-
ցեաց համար արժանաւոր պաշտօնեայց պատրաս-
տուի:

Գոհ եմք Գերապատիս Առաջնորդ Գէորգ սրբազն
Արքեպիսկոպոս Վեհապետեանցին, որ խորին ուշադ-
րութիւն գարնելով Աստրախանայ եւ վիճակին այս-
պիսի զգաի, եւ կենսական անհրաժեշտ կարօւու-
թեան, եւս ժողովրեան բռւռն եռանդին եւ ջանքերէն ու-
ոգեւորեալ, Հոգեւոր զպրոցաց Հոգաբարձութեամ ննտ-
ի միասին կարեւոր պատրաստութիւնքը կտիսնեն
թեմ. Դպրանոց բանալոյ համար, եւ ներկայ ամսոյն